ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/184

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի ներկայացուցիչ՝ Ա. Գալստյանի (լիազորագիր, տրված՝ 13.12.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Թ. Հովեսյանի (լիազորագիր, տրված՝ 13.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20425-2019 գրությամբ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 03.12.2019թ. թիվ 01/61-25637 գրության հիման վրա, 09.12.2019թ. թիվ 26/26-1/20425-2019 գրությամբ

նախաձեռնել է Ա/Ձ Շողիկ Մանասերյան Վոլոդյային (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.12.2019թ. գրությամբ հայտնել է, որ մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ապրանքների ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով մրցույթին, որը կայացել է 30.10.2019թ.: Գնային առաջարկ ներկայացնելիս Մասնակիցն անուշադրության հետևանքով թույլ է տվել սխալ: Մասնավորապես գնային առաջարկի մեջ երկրորդ չափաբաժնի համար նշվել է ապրանքի միավորի արժեքը, նախատեսված 2-ի փոխարեն, ինչի հետևանքով Մասնակիցը հրաժարվել է մրցույթի հետագա մասնակցությունից: Մասնակիցը հայտնել է, որ դա եղել է անուշադրության հետևանք և չի պարունակել որևէ միտում, ուստի խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/184 ընթացակարգի շրջանակներում 13.12.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.12.2019թ. թիվ 01/61-25637 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի համաձայն ծանուցվել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել նշված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի պահանջով, ծանուցել է Մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթերը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/184 ընթացակարգի շրջանակներում 13.12.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/184 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20425-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 03.12.2019թ. թիվ 01/61-25637 գրությունը և կից փաստաթղթերը, Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 01.11.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը:

Նույն արձանագրության համաձայն որոշվել է նիստը կասեցնել և ծանուցել Մասնակցին երեք աշխատանքային օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Մինչդեռ Մասնակիցը, որպես Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սահմանված ժամկետում չի ներկայացրել Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները

որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ն «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/212» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.12.2019թ. թիվ 26/26-1/20425-2019 գրությամբ Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Շողիկ Մանասերյան Վոլոդյայի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**